ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» Հոկտեմբեր 2021թ. N ՄՊ/445-2021

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով, 209-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 2 հավելվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 6-ի ՈԳՍ/17.3/26030-2021 գրությունը, «Նոր իրողությունների պարագայում ռուս–հայկական համագործակցության հեռանկարներ» խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային ութերորդ համաժողովին մասնակցելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ընդունել ի գիտություն, որ 2021 թվականի հոկտեմբերի 18-ին և 19-ին գործուղվելու եմ քաղաք Երևան՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
2. Գործուղումն իրականացնել TOYOTA LC 150 մակնիշի 055 LL 55 պետհամարանիշի ավտոմեքենայով:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնին (պետի պաշտոնակատար՝ Մ. Առուշանյան)՝ ապահովել համապատասխան վառելանյութի տրամադրումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 14.10.2021 17:25:33 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230